

Ն Ե Ր Դ Ր ՈՒ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության արտադրական հզորությունների ընդլայնում «Արա-Արեգ» ՍՊԸ» ծրագիր

(ՀՀ Գեղարքունիքի մարզի, Լճաշեն համայնք)

1	Ներդրումային ծրագրի անվանումը	Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության արտադրական հզորությունների ընդլայնում «Արա-Արեգ» ՍՊԸ)
2	Ընկերության անվանումը և կազմակերպա-իրավական ձևը	«Արա-Արեգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
3	Կոնտակտային տվյալներ	Վանիկ Սարգսյան հեռ.՝ 093 42 12 48
4	Ներդրման ոլորտը	Գյուղատնտեսական վերամշակում
5	Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
6	Արտադրվող ապրանքի կամ մատուցվող ծառայության հակիրճ նկարագրություն	Պանիր լոռի և չանախ տեսակի, թան գազավորված և չգազավորված, թթվասեր, կաթնաշոռ, մածուն և քամած մածուն, պաստերիզացված կաթ 3.2% յուղայնությամբ, կաթի սեր, կարագ:
7	Ծրագրի հակիրճ նկարագրություն	<p>Ընկերությունը մարզի շուրջ 300 տնային տնտեսություններից, խոշոր ֆերմերներից և գյուղատնտեսական կոոպերատիվից մթերում է օրական միջինում 2 տ կաթ: Արտադրացանկն ընդգրկում է կաթնամթերքի հիմնական տեսակները: Ներդրման արդյունքում Ընկերության արտադրական հզորությունը կարող է հասնել օրական 10 տոննայի: Կընդլայնվի Ընկերության արտադրանքը, կավելանան նոր արտադրատեսակներ, մասնավորապես՝ ավանդական լոռի և չանախ պանիրներից բացի կարտադրվեն նաև եվրոպական պինդ պանիրներ: Նաև, կավելանան ընկերությունում ամբողջ դրույքով աշխատող մարդիկ, կշատանան տնային տնտեսություններն ումից Ընկերությունը կաթ է մթերում:</p> <p>Ընկերությունը նախատեսում է ընդլայնել իր արտադրական հզորությունները, որպեսզի կարողանա կրկնապատկել մթերվող կաթի քանակը, մեծացնել արտադրանքի ծավալները և ընդլայնել ապրանքային շարքը: Ներդրումներն ուղղվելու են արտադրամասի, ներառյալ կաթսայատան, ընդլայնմանն ու բարեկարգմանը և նոր սարքավորումների ձեռքբերմանը:</p>
8	Ստեղծվող աշխատատեղեր	Ներդրումային ծրագրի իրականացման դեպքում մարզում կստեղծվի առնվազն 12 նոր մշտական (ոչ սեզոնային) աշխատատեղ: Այս թվին կավելանան նաև Ընկերության ստեղծվելիք ֆիրմային խանութների աշխատակազմն ու

		առաքիչները:
9	Այլ շահառուներ	Գեղարքունիքի մարզի 8 համայնքների մոտ 300 անհատներ, խոշոր տնտեսություններ և մեկ գյուղատնտեսական կոոպերատիվ: Ընդարձակվելու պարագայում շահառուների թիվը առնվազն կկրկնապատկվի: Առնվազն 12-ով կավելանա նաև աշխատակիցների թիվը: Կավելանան պետական և համայնքային բյուջե վճարվող հարկերը:
10	Ապրանքի կամ ծառայության հիմնական սպառման շուկան	Ընկերությունն իր արտադրանքն իրացնում է միայն Հայաստանում, որից մոտ 70 տոկոսը՝ Երևանում: Արտադրանքը վաճառվում է համեմատաբար փոքր խանութներում և հասարակական սննդի օբյեկտներում:
11	Ծրագրի ընդհանուր արժեքը	165 մլն ՀՀ դրամ
12	Պահանջվող գումարը	100 մլն ՀՀ դրամ
13	Սեփական ներդրումները	65 մլն ՀՀ դրամ
14	Այլ ներդրողներ	-
15	Հիմնական մրցակիցները	Քանի որ, ընկերությունն իր արտադրանքը չի վաճառում սուպերմարկետային ցանցի միջոցով, ապա կաթնամթերք արտադրող հիմնական ընկերությունները նրա ուղղակի մրցակիցները չեն: Ընկերությունը մրցակցում է նմանատիպ արտադրողների հետ, որոնց թիվը գերազանցում է 100-ը: Այնուամենայնիվ պետք է հստակ նշել, որ ընկերությունը խստորեն պահպանում է կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիան և սննդի անվտանգության կանոնները: Սննդի անվտանգության ISO 2200 ստանդարտը գտնվում է ներդրման փուլում: Ուստի, տնայնագործական եղանակով կաթի և կաթնամթերքի արտադրողներն ընկերության մրցակից չեն կարող դիտվել:
16	Ընկերության արտադրական հզորությունները	Ընկերությունը, միջին հաշվով, օրական վերամշակում է շուրջ 2 տոննա կաթ: Ընդլայնումից հետո Ընկերության հզորությունը (1 հերթափոխով աշխատանքային ռեժիմ) կկազմի օրական միջինում 10 տ կաթ:
17	Ընկերության տարեկան կանխատեսվող շրջանառությունը (վարկի կամ տրամադրված այլ օժանդակության ժամանակահատվածի համար)	2015 թ. շրջանառությունը 42 225 700 ՀՀ դրամ, 2016 (3 եռամսյակ)՝ 28,229,841 ՀՀ դրամ (վաճառքների էական մասը բաժին է ընկնում 4-րդ եռամսյակին, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների շրջանառությունը կազմել է մոտ 12 մլն ՀՀ դրամ):
18	Ծրագրի տարեկան եկամտաբերությունը (վարկի կամ տրամադրված	Կաթնամթերքի եկամտաբերությունը 5 տարիների ընթացքում 13%-ից կհասնի 39%-ի, իսկ պանիրի եկամտաբերությունը՝ 9%-ից կհասնի 22%-ի:

	այլ օժանդակության ժամանակահատվածի համար)	
19	Ծրագրի հիմնական ծախսային հոդվածների բացվածքը	<p>Պահանջվող ներդրումն անհրաժեշտ է Ընկերության համար արտադրամասերի ընդլայնման և կառուցման (ներառյալ կաթսայատան), արտադրության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման/բարեկարգման և սարքավորումների ձեռքբերման համար:</p> <p>Տարածքի ընդլայնման և բարեկարգման համար անհրաժեշտ գումարը կազմում է մոտ 90 մլն ՀՀ դրամ:</p> <p>Կաթսայատան շինարարության համար անհրաժեշտ է մոտ 5 մլն ՀՀ դրամ</p> <p>Արտադրամասը գազաֆիկացնելու համար անհրաժեշտ է մոտ 30 մլն. ՀՀ դրամ:</p> <p>Սարքավորումների ձեռք բերման համար անհրաժեշտ գումարը կազմում է մոտ 25 մլն ՀՀ դրամ:</p> <p>Կաթսայատան համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման համար անհրաժեշտ գումարը կազմում է մոտ 15 մլն ՀՀ դրամ:</p>
20	Առկա վարկային պարտավորությունների ծավալը	Ընկերության վարկային ծանրաբեռնվածությունը ներկայումս կազմում է մոտ 20մլն ՀՀ դրամ:
21	Ակտիվների գրավային ծանրաբեռնվածությունը	Ընկերության ողջ շարժական և անշարժ գույքը գրավադրված է «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում: Բաժնետերերի համատեղ սեփականություն հանդիսացող առանձնատները Երևանում և Լճաշեն համայնքում նույնպես գրավադրված են «Անելիք Բանկ» ՓԲԸ-ում:
22	Վարկային ռեսուրսից բացի պահանջվող այլ օժանդակություն	Հայաստանի Հանրապետության կառավարությունից Ընկերությունն ակնկալում է <ul style="list-style-type: none"> ✓ Սուբսիդավորված վարկային ռեսուրսներ, ✓ Դրամաշնորհ սարքավորումների մի մասի ձեռքբերման համար, ✓ Ընկերության գազաֆիկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի կառուցում: